Արձանագրություն N 2

«ԳՀԱՊՁԲ-2019/7-6-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «24» «նոյեմբերի» 2019թ.
ժամը՝ 12:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ.Մանուկյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Մամիկոնյան, Գ.Եղիազարյան, Տ.Սաֆարյան, Տ.Տեր-Կուրեղյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Հարությունյան

Բացակայում էին՝

«ԳՀԱՊՁԲ-2019/7-6-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման պարզաբանումների մասին

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար՝ շինանյութի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՀԱՊՁԲ-2019/7-6-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի N49-րդ չափաբաժնի մասով, 23.05.2019թ. էլեկտրոնային armeps.am համակարգով մասնակցի կողմից ուղարկվել է հարցադրում նշված չափաբաժնի տեխնիկական բնութագրի մասով, պահանջելով տալ պարզաբանում, հստակեցում ապրանքատեսակի գույնի վերաբերյալ:

Հարցադրում N 1:

Խնդրում եմ տալ պարզաբանում չափաբաժին 49-ում ձևակերպված գնման առարկա պատուհանագոգի գույնի մասով, քանի որ գույնից կախված փոփոխվում է նաև ապրանքի արժեքը և մատարակարարման ժամկետները մասնակցի մոտ: Նշված ձևակերպումը "Գույնը-ըստ Պատվիրատու" անհասկանալի է , քանի որ նույն պատվիրատուն է հայտարարել այս մրցույթը և պետք է հաստակ ձևակերպված լինի ապրանքի բնութագիրը:

Պարզաբանում N 1:

N49-րդ չափաբաժնի մասով հրավերի տեխնիկական բնութագրում հստակ նկարագրված է պատուհանագոգի մասով պատվիրատուին անհրաժեշտ ապրանքատեսակի բնութագրիչները /չափսեր, նյութ և այլ/: Ինչ վերաբերվում է գույնին, պատվիրատուն ձեռք է բերում պատուհանագոգեր տարբեր տարածքների ընթացիկ և շարունակական նորոգումների անհարաժեշտությունից ելնելով: Ուստի, գույնը կարող է որոշվել նշված վերանորոգումների

ընթացքում: Այնուամենայնիվ, գույնի ընտրության ժամանակ նախապատվությունը տրվել է տարբեր նախշային լուծումներով սպիտակ գույնի երանգներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի անունները և ստորագրությունները

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Հ.Մանուկյան

Անդամներ՝ _____ Վ.Մամիկոնյան

_____ Գ.Եղիազարյան

_____ Տ.Սաֆարյան

_____ Տ.Տեր-Կուրեղյան

Քարտուղար՝ _____ Ա.Հարությունյան